ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2008թ. սեպտեմբերի 25-ի թիվ 5 նիստում

Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
«25» սեպտեմբերի 2008թ.

Գխ Նախագահ, տնօրեն

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. Սույն կանոնակարգով սահմանվում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ուսանող»* մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգը:

1. 2.*«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ուսանող»* մրցանակաբաշխությունը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում 2 անգամ կիսամյակի արդյունքներով, որի նպատակն է խրախուսել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բակալավրիատում սովորող ուսանողների կրթական, գիտական, հասարակական ակտիվությունը և կարգապահությունը:

1. 3. Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

2. «ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2. 1. *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ուսանող»* ամենամյա մրցանակաբաշխությունը կազմակերպում և անցկացնում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ուսանող»* ամենամյա մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ *Հանձնաժողով*):

2. 2. *Հանձնաժողովը* բաղկացած է 6 անդամից, որի կազմի մեջ մտնում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի փոխտնօրենը, մասնաճյուղի արհմիության նախագահը, իրավախորհրդատուն, ուսումնամեթոդական բաժնի դիսպետչերը՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուն, ուսանողական խորհրդի նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը:

Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունը իրականացնում են հասարակական հիմունքներով:

2. 3. *Հանձնաժողովը* նախագահում է փոխտնօրենը, իսկ քարտուղարն է՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուն:

2. 4. *Հանձնաժողովը* հաստատում է իր գործունեության աշխատակարգը:

2. 5. Ներկայացված թեկնածուներից լավագույնի ընտրության համար *Հանձնաժողովի* նիստերը գումարվում են մրցանակաբաշխության անցկացման համար նշանակված օրվանից առնվազն 7 օր առաջ:

2. 6. *Հանձնաժողովի* նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

2. 7. *Հանձնաժողովի* որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ և մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը հրապարակման ենթակա չեն:

3. ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3. 1. Մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 40 օր առաջ *Հանձնաժողովի* քարտուղարի կողմից ֆակուլտետների դեկաններին է ուղարկվում մրցանակաբաշխության թեկնածուների (այսուհետ՝ *Թեկնածու*) ներկայացման վերաբերյալ հայտը և լրացման ենթակա հարցաթերթերը (կից ներկայացվում է հավելված 1-ում):

3. 2. *Թեկնածուների* ներկայացման վերաբերյալ հայտը ստանալուց ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում ֆակուլտետի խորհուրդը քննարկում և առաջարկում է «Լավագույն ուսանող» մրցանակի հավակնող 3 թեկնածուի, ովքեր առնվազն 6 կիսամյակ անընդմեջ հանդիսացել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանող և չունեն կարգապահական տույժեր:

3. 3. Ֆակուլտետի դեկանը 3 թեկնածուների փաստաթղթերը ներկայացնում է *Հանձնաժողովի* քարտուղարին: Փաստաթղթերում յուրաքանչյուր թեկնածուի մասով պետք է ներառվեն.

ա/ քաղվածք ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրությունից տվյալ թեկնածուի ներկայացման վերաբերյալ,

բ/ ներկայացված թեկնածուի վերաբերյալ երեք բնութագիր, առաջինը՝ տրված ֆակուլտետի դեկանի, երկրորդը՝ համապատասխան ամբիոնի վարիչի կողմից, իսկ երրորդը՝ ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից,

գ/ առաջադիմության թերթիկի պատճենը,

դ/ լրացված հարցաթերթիկը:

4. «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑԱՆԱԿԱԿՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

4. 1. Ներկայացված թեկնածուներից լավագույնին ընտրելու գործընթացում *Հանձնաժողովը* առաջնորդվում է հետևյալ հիմնական չափորոշիչներով.

ա/ ուսման առաջադիմություն

բ/ գիտական աշխատանքներ կատարելու ունակություն

գ/ ուսանողական հասարակական ակտիվություն

դ/ օրինակելի վարք:

Թեկնածուների հավասար ցուցանիշների դեպքում լրացուցիչ չափորոշիչներ են հանդիսանում *Թեկնածուի* կողմից լրացված հարցաթերթում տեղ գտած մյուս հարցերի շուրջ նրա արտահայտված դիրքորոշումն ու մոտեցումները:

4. 2. Ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով:

- 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր վերջին երկու կիսամյակում անընդմեջ ցուցաբերել են բացարձակ գերազանց առաջադիմություն:
- 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր վերջին չորս կիսամյակում անընդմեջ ցուցաբերել են բացարձակ գերազանց առաջադիմություն:
- 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ողջ ուսումնառության ընթացքում ցուցաբերել են բացարձակ գերազանց առաջադիմություն:

4. 3. Ներկայացված թեկնածուների գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5 - 7 միավորներով:

- 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներմասնաճյուղային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ:
- 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր մասնակցել են հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում:
- 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում:

4. 4. Ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով:

- 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն:
- 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:
- 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են մասնաճյուղային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. 1. Հանձնաժողովի կողմից ընդունած որոշումները կարող են բողոքարկվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենին, «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության անցկացման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

5. 2. Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ օրենսդրության, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության և սույն կանոնակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենը գրավոր, պատճառաբանված որոշմամբ անվավեր է ճանաչում «Լավագույն ուսանող» մրցանակակրի ընտրությունը և 10- օրյա ժամկետում նշանակում է նոր ընտրություն:

Հավելված 1-ին

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Լուսանկար

1. _____
անուն, ազգանուն, հայրանուն

2. _____
ֆակուլտետ

3. _____ _____ կուրս
մասնագիտություն

4. _____ 5. _____
ծննդյան ամսաթիվ *հեռախոս*

6. _____
էլ- փոստ

7. _____
Հասցե

8. Ունենք արդյո՞ք մասնակցություն ներմասնաճյուղային ուսանողական կյանքում (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) և, եթե այո, ապա ինչպիսին.

_____

_____

_____

_____

_____

9. Այլ (երիտասարդական ուսանողական) կազմակերպություններում ինչպիսի մասնակցություն ունեք, և որն է Ձեր մոտիվացիան նման գործունեությամբ (ներմասնաճյուղային կամ արտամասնաճյուղային) զբաղվելու համար.

_____

_____

_____

_____

_____

10. Ինչ նախաձեռնություններ Դուք ունեք և կարող եք առաջարկել ներմասնաճյուղային կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու համար.

_____

_____

_____

_____

_____

11. Ունե՞ք կատարված գիտական աշխատանքներ, եթե այո, ներկայացրեք դրանց ցանկը.

_____

_____

_____

_____

12. Որո՞նք են Ձեր կարծիքով ուսանողությանը հուզող հիմնական խնդիրները.

13. Ինչպիսի՞ միջազգային ծրագրերի եք մասնակցել (գիտաժողովներ, խորհրդաժողովներ, սեմինարներ, ֆորումներ և այլն).

14. Ձեր կարծիքով, որո՞նք են XXI դարի ուսանողին բնութագրող հատկանիշները.

15. Ունեն արդյո՞ք այդ հատկանիշները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները և Ձեր կարծիքով ինչ է տալիս մասնաճյուղը.

16. Եթե հնարավորություն լինի որոշ ժամանակ ուսանել եվրոպական կամ ամերիկյան համալսարաններից որևէ մեկում, կցանկանաք արդյո՞ք ուսանել այնտեղ և ինչու՞.

17. Ինչպիսի՞ այլ հետքրքրություններ ունեք.

ամիս, ամսաթիվ _____ ստորագրություն_____